Հաստատում եմ՝

ԵՊՀ հումանիտար և հասարակագիտական

մասնագիտությունների գծով

պրոռեկտոր Ե. Ասրիյան

«_02_» _____ 2020թ.

«_____» _____ 2020թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Մանե Վովայի Խաչատրյանի «Մարդու իրավունքների վարչաիրավական պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ԺԲ.00.02- «Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում)» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

1. **Մանե Վովայի Խաչատրյանի** (այսուհետ՝ հեղինակ) **«Մարդու իրավունքների վարչաիրավական պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում»** վերտառությամբ իրավագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման աշխատանքի (այսուհետ՝ աշխատանք) արդիականությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով:

Մարդու իրավունքների և ազատությունների վարչաիրավական պաշտպանության խնդիրը՝ հակամարտությունների ու բախումների պակաս չունեցող ներկայիս հասարակության մեջ բավականին բարդ է, և դեռևս պահպանվում է այն քաղաքականացնելու, դրանով իսկ այն անհրակի խոցելի դարձնելու վտանգը: Մարդու

իրավունքներն առավել հաճախ խախտվում են հանրային հարաբերությունների ոլորտում, որտեղ գործադիր իշխանությունն առավել հակված է իր վարչական կառուցակարգերն ու լծակները ծառայեցնելու գերատեսչական շահերին: Այս երևույթը գոյություն է ունեցել դեռևս վաղնջական ժամանակներից և, թեև, փոքր-ինչ ձևափոխվել է իրավաքաղաքական մշակույթի զարգացմանը զուգահեռ, այն դեռևս առկա է հանրային հարաբերությունների տարբեր ոլորտներում: Գրախոսվող ատենախոսությունը նվիրված է նշված ոլորտում առկա տեսահրավական հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությանը:

Այս համատեքստում հեղինակին հաջողվել է սպառիչ ու ներքին հետևողական տրամաբանությամբ անդրադառնալ ուսումնասիրության նպատակին և խնդիրներին, հետազոտության նյութ դարձնել ընտրված թեմայի առավել արդիական հարցադրումները և առաջարկել որոշակի գիտագործնական լուծումներ:

Աշխատանքի հիմքում դրված են անհրաժեշտ գրականության աղբյուրներ, ինչպես մայրենի լեզվով, այնպես էլ՝ օտարալեզու, այդ թվում՝ ներպետական և միջազգային իրավական ակտեր, դատական ակտեր, իրավական ակտերի նախագծեր, որոնց վերլուծության և դրանցից օգտվելու կտրվածքով հեղինակը դրսևորել է պատշաճ ունակություն և հմտություններ:

2. Ատենախոսությունը շարադրված է հետազոտական մեթոդաբանությամբ, այն ներառում է որոշակի ինքնուրույն դատողություններ և եզրակացություններ, որոնք ուղեկցվել են անհրաժեշտ հիմնավորումներո, համալիր փաստական նյութով և օրենսդրական փոփոխություններ կատարելու առաջարկություններով:

Ընդունելի է Հեղինակի կողմից իր տրամաբանական եզրահանգումները ու մոտեցումները, այդ թվում՝ օրենսդրական առաջարկությունները համակարգված տեսքով աշխատանքի եզրակացության հատվածում ներկայացնելը:

Թեկնածուական ատենախոսության արդյունքները կարող են կիրառական նշանակություն ձեռք բերել, քանի որ հեղինակին հաջողվել է դրսևորել որոշակի ինքնուրույնություն, ներպետական օրենսդրությունը, ինչպես նաև միջազգային իրավական փաստաթղթերը համարժեք ընկալելու և իրավական հիմքերը կատարելագործելուն

ուղղված համարժեք առաջարկություններ ներկայացնելու կարողություն, թեմային առնչվող տեսական աղբյուրների հաջողված իրազեկվածություն և այլն:

3. Թեկնածուական ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:

Ատենախոսության մեջ բացակայում են խրթին մտքերը, չկան էական քերականական և շարահյուսական կանոնների խախտումներ, վրիպակները ևս սակավաթիվ են:

Աշխատանքի կառուցվածքն իրավական ընկալունակության տեսանկյունից ընդունելի է և ընտրված հարցադրումների ցանկի հետ միասին հնարավորություն է տվել ապահովելու հետազոտության ամբողջականությունը և եզրահանգումների հիմնավորվածությունը:

4. Գրախոսվող աշխատանքի կապակցությամբ ունենք հետևյալ դիտողությունները.

1. Պաշտպանության ներկայացրած երկրորդ դրույթի ներքո հեղինակը փորձել է տալ «վարչաիրավական պաշտպանություն», «պաշտպանության ձև» և «պաշտպանության միջոց» եզրույթների բնորոշումները: Ըստ հեղինակի՝ «մարդու իրավունքների պաշտպանության վարչաիրավական ձևերը» դրսևորվում են պետության Սահմանադրությամբ, սահմանադրական օրենքներով, օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով ամրագրված հանրային իշխանության մարմինների և դրանց պաշտոնատար անձանց՝ մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված այն գործունեության ընթացքում, որը նպատակաուղղված է մարդու իրավունքների խախտումների կանխարգելմանը, հայտնաբերմանը և վերացմանը: Այլ կերպ կարելի է ասել՝ օրենով սահմանվում և ամրագրվում է, թե որ ինստիտուտը և ինչ կամզմակերպաիրավական ձևերով է իրականացնում իրավունքների պաշտպանությունը:

Մեր կարծիքով՝ որոշակի վերապահումներով պետք է ընդունել պաշտպանության ներկայացվող դրույթներից որոշները (2-րդ դրույթը, «մարդու իրավունքների պաշտպանության վարչաիրավական ձևերը» հասկացության բնորոշման մասով, 3-րդ, 4-րդ):

Մեր կարծիքով՝ պաշտպանության ներկայացվող յուրաքանչյուր դրույթ իրենից ներկայացնում է որոշակի գիտական գիտելիքների և գիտական մեթոդաբանության հիման վրա կատարված այն ընդհանրական եզրահանգումը (գաղափարը), որը հեղինակը առաջ է քաշում գիտության կոնկրետ բնագավառում էական նշանակություն ունեցող խնդրի լուծման համար: Մեր կարծիքով՝ մարդու իրավունքների պաշտպանության վարչաիրավական ձևերը» հասկացության վերոնշյալ ձևակերպումը չի համապատասխանում գիտական նորույթին ներկայացվող պահանջներին: Բացակայում է «մարդու իրավունքների պաշտպանության վարչաիրավական ձևերը» հասկացության բովանդակային սահմանում, այլ կերպ բացահայտված չեն այն էական հատկանիշների համակցությունը, որոնց ամբողջության հիման վրա կարելի է նշված հասկացությամբ անվանվող երևույթը տարանջատել նմանատիպ այլ երույթներից: Հեղինակը «մարդու իրավունքների պաշտպանության վարչաիրավական ձևերը» հասկացության վերաբերյալ նույնաբովանդակ դիրքորոշում է հայտնել նաև աշխատության 63-64-րդ էջերում:

Պաշտպանության ներկայացվող դրույթների ձևակերպման համար կիրառվող «միջոցառումների ամբողջական շրջանակ», «նոր չափանիշներ» եզրույթները բավականին անորոշ են: Դրանք հնարավորություն չեն տալիս առնվազն ատենախոսության՝ «պաշտպանության ներկայացվող դրույթներ»-ը հատվածում պարզելու հեղինակի՝ որոշակի գիտական մեթոդաբանության հիման վրա կատարված ուսումնասիրությունների արդյունք հանդիսացող գիտական ընդհանրացումները, եզրահանգումները:

2. Պաշտպանության 5-րդ դրույթում հեղինակը նշում է. «... *գտնում ենք, որ պետք է օրենսդրորեն ամրագրվեն մարդու իրավունքների պաշտպանության իրական երաշխիք հանդիսացող այլ դրույթներ նույնպես, մասնավորապես՝ յուրաքանչյուր վարչական ակտում հարկ է անդրադառնալ այն հարցին,* ***<u>թե արդյոք տվյալ իրավական ակտը կամ վարչարարությունը ենթակա է բողոքարկման, ինչ կարգով</u>*** *և այլն*»:

Մեր կարծիքով հեղինակի նշված տեսակետը պետք է ընդունել որոշակի վերապահումով, քանի որ «վարչարարությունը» որպես գործընթաց ինքնին բողոքարկման օբյեկտ և/կամ/ առարկա չի հանդիսանում: Բողոքարկման օբյեկտ է վարչարարության

արդյունքում ընդունվող նորմատիվ և/կամ/ վարչական ակտը, ինչպես նաև վարչարարության տեսակ հանդիսացող գործողությունը/անգործությունը/, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ: Նշված եզրահանգման իրավական հիմքը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված դրույթն է: Եթե հեղինակը ատենախոսությունում «վարչարարություն» հասկացությանը տվել է այլ որակական հատկանիշներ, քան տրված է օրենսդրորեն և գտել է, որ վարչարարությունն ինքնին բողոքարկման օբյեկտ է, ապա վերջինս աշխատանքում պետք է պաբահայտեր այդ հատկանիշները:

3. Պաշտպանության ներկայացվող 6-րդ դրույթում հեղինակը նշում է. «*դիմելու իրավունքի իրացման անկատար իրավակարգավորումները կարող են չարաշահումների տեղիք տալ և՛ վարչական մարմնի (պաշտոնատար անձի), և՛ քաղաքացիների կողմից: ... դիմելու իրավունքի իրացման շրջանակներում չարաշահման կանխման համար անհրաժեշտ են հավասարակշռված իրավակարգավորումներ...: Վարչական մարմինների կողմից իրավունքի չարաշահման կանխման նպատակով իրավակարգավորումները պետք է համապատասխանեն առնվազն հետևյալ չափանիշներին...*»:

Մեր կարծքիով «հավասարակշռված իրավակարգավորումներ» ամրագրելու առաջարկն ինքնին գիտական նորույթ չէ: Ինչ վերաբերում է համապատասխան իրավակարգավորումները՝ որոշակի չափանիշների համապատասխանելու հեղինակի մոտեցմանը, ապա հարկ է նշել, որ նշված չափանիշները, եթե ոչ ամբողջությամբ, ապա գոնե դրանց զգալի մասն օրենսդրորեն ամրագրված են: Մասնավորապես՝ անհարկի փաստաթղթեր (տեղեկություններ) պահանջելու դեպքերի բացառման, ինչպես նաև քաղաքացու իրավունքի իրացմանապահովումը նույն քաղաքացու կողմից իր որևէ այլ իրավունքի իրացմամբ պայմանավորելու վարչական մարմինների պահանջներն արգելելու վերաբերյալ որոշակի իրավական կարգավորում է ամրագրված «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի –րդ, 10-րդ հոդվածներով: Անձի դիմումը անթույլատրելի համարվելու վերաբերյալ (երբ այդ նույն հիմքերով և նույն պահանջով քաղաքացին իր դիմելու իրավունքը որևէ ձևով արդեն իսկ իրացրել է) անուղղակի կարգավորումներն ամրագրված են «Վարչարարության հիմունքների և

վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետով: Հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 9-րդ, 10-րդ հոդվածների վերաբերյալ նույնաբովանդակ դիրքորոշում է հայտնել հենց հեղինակը ատենախոսության 90-91-րդ էջերում:

Ավելին՝ նշված նորմերի իրացման կապակցությամբ ձևավորվել է հստակ դատաիրավական պրակտիկա, որտեղ դատական ատյանները, մեկնաբանելով և բացահայտելով վերոնշյալ հոդվածներով ամրագրված նորմերի էությունը, նշել են այն չափանիշները, որոնք գրեթե նույնական են հեղինակի առաջ քաշած չափանիշներին:

4. Հեղինակն առանձնացրել է իրավական պաշտպանության ձևերը՝ դասակարգելով ընդհանուր ձևի և հատուկ ձև/եր/ի (էջ 57), այնուհետև մանրամասնելով նշել է. « *Ընդհանուր ձևը* դատական պաշտպանությունն է, որտեղ որպես միջոց ծառայում է *հայցը*, ***<u>իսկ հատուկ ձևը պաշտպանության արտադատական կամ մինչդատական ձևն է, որը բաժանվում է վարչական և հանրային կամ հասարակական ձևերի. այստեղ պաշտպանության միջոցը բողոքն է:</u>*** *Պաշտպանության դատական ձևն իրապես համարվում է ավանդական, հիմնական, բազմակողմանի, համապարփակ և, ամենակարևորը, արդյունավետ, հետևաբար անձն իր իրավունքների պաշտպանության համար, առաջնային կարգով իրացնելով իր սահմանադրական իրավունքը, դիմում է դատարան: Դատական պաշտպանությունն իրականացվում է սահմանադրական, քաղաքացիական, վարչական և քրեական դատավարության միջոցով: Պաշտպանության հատուկ կամ արտադատական ձևը հանդիսանում է անձի սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության հետ կապված հանրային հարաբերությունները կարգավորող ինքնուրույն իրավական ինստիտուտ, որն այդ պաշտպանությունն իրականացնում է առանց դատարանի օգնության կամ միջնորդության: ...* ***<u>Մարդու իրավունքների պաշտպանության արտադատական ձևն իրականացվում է պետական իշխանության մարմինների, վարչական մարմինների, դատախազության, մարդու իրավունքների պաշտպանի, հասարակական կազմակերպությունների և քաղաքական կուսակցությունների կողմից</u>***»: Այլ կերպ՝ հեղինակը իրավական պաշտպանության ընդհանուր ձև հանդիսացող դատական պաշտպանությունը (պաշտպանության միջոց

հանդիսացող դատական հայցով) չի դիտարկում որպես վարչաիրավական պաշտպանության ձև (պաշտպանության միձոց հանդիսացող բողոքով): Ինչը մեր կարծիքով լիովին հիմնավոր եզրահանգում է: Սակայն ատենախոսության 67-րդ էջում հեղինակը կատարում է տրամաբանորեն հակառակ ընդհանրացում և որպես վարչաիրավական պաշտպանության հիմնական ձև նշում է *վարչական ակտի, վարչական մարմնի գործողության կամ անգործության դատական կարգով բողոքարկումը: ՀՀ* իրավական համակարգում *վարչական ակտի, վարչական մարմնի գործողության կամ անգործության դատական կարգով բողոքարկման իրավական կարգավորման կառուցակարգը սահմանված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով: Այդ կառուցակարգի մեկնարկը գործի հարուցման առումով տրվում է բացառապես հայցով (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդված):*

Նման իրադրությունում ատենախոսությունից պարզ չէ հեղինակը դատական պաշտպանությունը (դրա միջոց դատական հայցով հանդերձ) դիտարկու՞մ է վարչաիրավական պաշտպանության ձև, թե՞ ոչ: Մեր կարծիքով՝ հեղինակը պետք է հստակ տարանջատեր վարչաիրավական և վարչադատավարական իրավական գոյերը՝ դրանց գործնական հարաբերություններում իրացման իրավայան գործընթացներով և այդ գործընթացների իրավական կարգավորմանն ուղղված ընթացակարգերով հանդերձ:

Ամփոփելով ատենախոսության վերաբերյալ դատողությունները՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ **Մանե Վովայի Խաչատրյանի** (այսուհետ՝ հեղինակ) **«Մարդու իրավունքների վարչաիրավական պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում»** վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է ԺԲ.00.02. «Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում)»

մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել և երաշխավորվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի 2020թ. հոկտեմբերի 20-ի առցանց նիստում:

ԵՊՀ սահմանադրական իրավունքի
ամբիոնի վարիչ՝
Իրավագիտության թեկնածու,դոցենտ Վ.Ն.Այվազյան

ԵՊՀ գիտական քարտուղար Լ.Ս.Հովսեփյան